

**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
28.06.2024թ. նիստի N 11 արձանագրություն**

Օրակարգ

1. Բակլավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում:
2. Ուսանողների մասնագիտական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
3. Ֆակուլտետի մեթոդխորհրդի 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվություն:
4. 2023-2024 ուստարում ամբիոնների կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվություն:
5. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստին 36 անդամներից ներկա էին 27-ը: ԵԼՀ ֆակուլտետի ղեկան Գ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ Բակլավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփմանը: Դեկանը նշեց, որ ընդհանուր առմամբ այդ գործընթացն անցել է բնականոն, և հորդորեց գործընկերներին առավել ուշադրություն հատկացնել նախապաշտպանությանը:

Գ. Բարսեղյանն այնուհետև անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ ուսանողների մասնագիտական ու մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփմանը և խոսքը փոխանցեց փոխդեկան Մ. Յաղուբյանին: Փոխդեկանը նշեց, որ մասնագիտական և մանկավարժական պրակտիկան անցել է բնականոն հունով:

Գ. Բարսեղյանն անցավ օրակարգի երրորդ հարցին՝ խոսքը փոխանցելով ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ Ն. Հարությունյանին՝ ներկայացնելու 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

- ❖ **ԼՄԵՑԻՆ՝** ԵԼՀ ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ Ն. Հարությունյանի՝ 2023-2024 ուստարում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ Ն. Հարությունյանը ներկայացրեց 2023-2024 ուստարում կատարած աշխատանքները՝ նշելով, որ հաշվետու ուստարում մեթոդխորհրդի 5 նիստի ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցման որակի ապահովման և բարձրագման հետ կապված մի շարք հարցեր, որոց թվում՝

- ընթացիկ քննությունների թեստերի, ստուգմանը և գնահատմանն առնչվող մոտեցումների քննարկումը:
- կրթական ծրագրերի ուսումնական պլանների, մասնավորապես «*Զբոսաշրջային թարգմանություն (անգլերեն-հայերեն)*» մագիստրոսի կրթական ծրագրի 2024-2026թթ. պլանում փոփոխությունների հարցը,
- դասագրքերի, ուսումնական ու մեթոդական ձեռնարկների ու դրանց գրախոսության քննարկման հարցը. 2023-2024 ուստարվա ընթացքում մեթոդխորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կազմված մեկ ուսումնական ձեռնարկ և մեկ դասագիրք:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ Ն. Հարությունյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Գ. Բարսեղյանը, անդրադառնալով օրակարգի չորրորդ հարցին՝ 2023-2024 ուստարում ամբիոնների կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ ամբիոնների վարիչների հաշվետվությանը, խոսքը փոխանցեց անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանին:

ԼՄԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանի հաշվետվությունը՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանը նշեց, որ ամբիոնը իրականացնում է անգլերենի դասավանդումը ոչ մասնագիտական ֆակուլտետներում, իսկ 2001թ.-ից նորովի վերամշակելով իր ծրագրերը՝ կիրառում է դասավանդման նոր մեթոդաբանություն՝ ESP, որը զգալիորեն նպաստում է դասավանդման արդյունավետությանը: Նույն տարում ամբիոնում հիմնվել է FLSP (Օտար լեզուն մասնագիտական նպատակների համար) պարբերականը (գլխավոր խմբագիր՝ Մ. Ապրեսյան), որտեղ լուսաբանվում են օտար լեզուների դասավանդման փորձն ու ձեռքբերումները:

Հաշվետու տարվա առաջին կիսամյակում տպագրության է հանձնվել «Օտար լեզուն մասնագիտական նպատակների համար» պարբերականի FLSP №2(22)2023 հեթական համարը, իսկ մինչ ուստարվա ավարտը կտպագրվի նաև նոր՝ FLSP №1-2 (23)2024 համարը (պարբերականը ներառված է ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական պարբերականների ցանկում):

Անգլերենի թիվ 1 ամբիոնը 2010թ.-ից որդեգրել է միջազգային թեստավորման ուղին և հանդիսանալով TOEFL միջազգային թեստավորման պաշտոնական կենտրոն՝ յուրաքանչյուր տարի հաջողությամբ իրականացնում է նախապատրաստական դասընթացներ և թեստավորում ԵՊՀ և ՀՀ պետական մի շարք բուհերի ասպիրանտուրայի հավակնորդների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների համար: 2023-2024 ուստարում ևս ամբիոնի կողմից իրականացվել են TOEFL (ibt) միջազգային թեստավորում և նախապատրաստական դասընթացներ վերոնշյալ շահագրգիռ անձանց համար, որոնց մեծամասնությունը հաղթահարել է պահանջվող շեմը:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչի նախաձեռնությամբ Բրիտանական խորհրդի հետ փոխգործակցության շրջանակում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ հայաստանյան գրասենյակի տնօրենի և ԵՊՀ ղեկավար կազմի միջև՝ քննարկելով քննությունների կազմակերպման ծրագրեր, որոնց արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն ԵՊՀ-ում հիմնել IELTS միջազգային թեստավորման պաշտոնական քննական կենտրոն: Աշխատանքներ են տարվում նաև Cambridge Assessment English-ի հետ համագործակցելու և միջազգային մի շարք քննությունների անցկացման իրավունք ստանալու ուղղությամբ:

1. Ամբիոնը Արցախից բռնի տեղահանված շուրջ 30 դպրոցականների համար կազմակերպել է օտար լեզվի առցանց դասընթացներ՝ ֆակուլտետի ավարտական կուրսերի ուսանողների մանկավարժական պրակտիկայի շրջանակում /անգլերեն՝ 3 խումբ, ֆրանսերեն՝ 1 խումբ, ռուսերեն՝ 1 խումբ/:
2. Անգլերենի թիվ 1 ամբիոնի և «ՅՈՒՔՈՄ» ընկերության հետ համագործակցության շրջանակում կազմակերպվել են օտար լեզվի դասընթացներ ընկերության աշխատակիցների երեխաների համար: Նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել «ԱԹԵՆԶ» ընկերության հետ՝ անցկացնելու մասնագիտական օտար լեզվի դասընթացներ աշխատակիցների համար, որոնք կբարձրացնեն նրանց օտար լեզվի իմացության մակարդակը՝ նպաստելով մասնագիտական գիտելիքների խորացմանն ու միջազգայնացմանը:
3. Հաշվետու ուստարում վերամշակվել են բակալավրիատի և մագիստրատուրայի դասընթացների ծրագրերը:
4. 2023-2024 ուստարում ամբիոնի մի շարք դասախոսներ ամբիոնի վարիչի գլխավորությամբ ակտիվորեն մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների և մասնագիտական վերապատրաստումների.

- British Council Armenia’s Annual Conference: Teaching for Success, 2024
- U-Green. University Cooperation for Promoting the GREEN Transition and Sustainable Practices in Education and Training, Almeria (Spain), 2024
- XIII International staff week. ERASMUS+ Programme and Partner Countries. Staff Training Week. Almeria (Spain), 2024
- Mobility Teacher Training, Valladolid University, Spain, 2024
- Human Rights Research in Armenia: Current and Emerging Issues, YSU, 2023:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ԵԼՀ ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանի հաշվետվությունը՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ՝ գնահատել այն դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՄԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանի հաշվետվությունը՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանը նշեց, որ ամբիոնը գործունեություն ծավալում է մի քանի ուղղություններով՝ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, հրատարակչական և ուսումնադաստիարակչական:

Ուսումնական աշխատանք

Ամբիոնը անգլերենի դասավանդումը հիմնականում ապահովում է ԵՊՀ մի շարք հումանիտար ֆակուլտետներում: Դասավանդման հիմքում են բակալավրիատում՝ անգլերենը որպես օտար/երկրորդ լեզու՝ (EFL/ESL) և անգլերենը մասնագիտական նպատակների համար (ESP), իսկ մագիստրատուրայում՝ անգլերենը ակադեմիական նպատակների համար (EAP) դասընթացները: Վերանայվել են բակալավրիատում և մագիստրատուրայում անգլերենի ուսումնասիրությանը ուղղված դասընթացների առարկայական նկարագրերը:

Գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանք

Գիտահետազոտական աշխատանքի շրջանակում ամբիոնում կատարվում են ուսումնասիրություններ արդի լեզվաբանության տարբեր ուղղություններով՝ բառագիտության, իմաստաբանության և գործաբանության, լեզուների զուգադրական ուսումնասիրության, բառարանագրության և թարգմանության տեսության, ինչպես նաև օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի, գիտելիքների գնահատման և թեստավորման վերաբերյալ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքները պարբերաբար ներկայացվում են տարբեր գիտաժողովներում (ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային), ամփոփվում ամբիոնի դասախոսների կողմից հեղինակած հոդվածներում:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները գիտական տարբեր պարբերականներում, այդ թվում նաև ԲՈՒԿ-ի կողմից ընդունելի գիտական հանդեսների ցանկում ընդգրկված ամսագրերում հրատարակել են 20 հոդված: Հոդվածներից 2-ը (հեղինակ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ե. Երզնկյան) լույս են տեսել Scopus համակարգում գրանցված ամսագրերում (Q1 և Q3 քառորդներում): Լույս է տեսել նաև «*Political Science and Public Administration: Language Practice*» դասագիրքը (հեղինակներ՝ Մ. Կարապետյան և Ա. Պետրոսյան): Ամբիոնի դասախոսները մասնակցել են Երևանում կայացած *Eurasian Translation Congress 2* “*Translation through Intermediary Language, Yerevan, 27-29 September*” միջազգային գիտաժողովին:

Դասախոսների որակավորման բարձրացում

Մասնագիտական վերապատրաստումների շրջանակում ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցել են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված մի շարք սեմինարների, Վերապատրաստումներն ու դրանց հաջորդող քննարկումները նվիրված էին օտար լեզվի դասավանդման նորարարական մեթոդները լսարանում կիրառելու մարտահրավերներին ու դրանց հնարավոր լուծումներին:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնն ակտիվ համագործակցել է օտարերկրյա առաջատար համալսարանների մասնագետների հետ «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսի շրջանակներում (ՌԴ, Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա, Հունգարիա, Լեհաստան, Մոնտենեգրո):

Հրատարակչական աշխատանք

Ամբիոնը կանոնավոր պարբերականությամբ տարեկան 2 անգամ հրատարակում է «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսը, որն ընդգրկված է դոկտորական և թեկնածուական ստենախոսությունների արդյունքների տպագրման համար ԲՈԿ-ի կողմից հաստատված պարբերականների ցանկում: Հաշվետու ժամանակահատվածում լույս են տեսել գիտական հանդեսի հետևյալ համարները՝ «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», հատոր 27, № 2 (35), Երևան, 2023 և «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», հատոր 28, № 1 (36), Երևան, 2024:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ԵԼՀ ֆակուլտետի անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե. Երզնկյանի՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ գնահատել այն դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

❖ **ԼՍԵՑԻՆ՝** Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Սեդրակյանի՝ 2023-2024թ. ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Սեդրակյանը նշեց, որ ամբիոնը գործունեություն է ծավալել ինչպես ուսումնական, այնպես էլ գիտական աշխատանքների գծով: Ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են ինչպես ԵՊՀ-ում, այնպես էլ հանրապետության այլ բուհերում և արտերկրում անցկացվող գիտաժողովներին: Ամբիոնը պարբերաբար գրականագիտական հարցերի շուրջ քննարկում-սեմինարներ է կազմակերպում ուսանողների հետ: Նշվեց, որ արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը կարևոր տեղ է հատկացնում գիտական հրատարակությունների, ինչպես նաև գեղարվեստական թարգմանությունների իրականացմանը:

Մասնավորապես՝ 2023թ. լույս է տեսել Լարի Սենի «Տրամադրության վերելակ» գրքի թարգմանությունը:

Հաշվետու ուստարում լույս է տեսել ասիստենտ, բ.գ.թ. Ամալյա Մողոմոնյանի «Պատմական և իրական ժամանակը Խալեդ Հոսեյնիի վեպերում» մենագրությունը:

Տպագրության է պատրաստվում ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ. Արա Առաքելյանի «Եվրոպական միջնադարի էպոսը. դիցաբանություն, պատմություն, պոետիկա, ավանդույթ» մենագրությունը՝ ծավալով 450 էջ:

Մ/թ ապրիլին Էրազմուս+ միջազգային շարժունության ծրագրի շրջանակում Պորտուգալիայի Էվորայի համալսարանի դասախոս Կարլա Ֆերեյրա դե Կաստրոն ներկայացրեց «Գինին և գրականությունը» և «Մարդկային ինքնությունը և հիշողությունը» դասախոսությունների շարքը: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցությամբ ծավալվեցին քննարկումներ նշված թեմաների շուրջ:

Մայիսի 18-ին տեղի ունեցավ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Անուշ Սեդրակյանի «Ֆրանսիական պոեզիա» գրքի շնորհանդեսը: Հունիսի 3-ին Ռամոն Խիմենեսի «Պլատերոն և ես» Դոն Խուան Մանուելի «Կոմս Լուկանոր» երկերի թարգմանության շուրջ ամբիոնում քննարկում կայացավ: Ամբիոնը զգալի աշխատանք է կատարում միջազգային համագործակցության խթանման գծով:

Ներկա դրությամբ ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքներն են իրականացնում 2 ասպիրանտ և 2 հայցորդ:

Ամբիոնը նախատեսում է 2024թ. հոկտեմբերին կազմակերպել գիտաժողով, որի շրջանակում պատրաստվում են գիտաժողովի թեզիսները սահմանված ժամկետների համար: Գիտաժողովին զեկուցումներով կարող են մասնակցել թատերագետներ, շեքսպիրագետներ, գրականագետներ, բեմադրիչներ, արվեստաբաններ, ասպիրանտներ և մագիստրատուրայի ուսանողներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ԵԼՀ ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Սեդրակյանի՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ գնահատել այն դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

❖ **ԼՄԵՑԻՆ՝** Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանի՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանը նշեց, որ 2023-2024 ուստարում ռոմանական բանասիրության ամբիոնը աշխատանքներն իրականացրել է մի քանի ուղղություններով՝ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, ինչպես նաև միջազգային համագործակցության խթանման առումով: Ինչպես և նախորդ ուսումնական տարիներին, ամբիոնի գործունեության առաջնահերթ խնդիրը ծրագրային արդի պահանջներին համապատասխան դասավանդման որակի բարձրացումն էր, ուսումնաստեխնիկական բազայի հարստացումը, օտար լեզուների դասավանդման մեթոդների կատարելագործումը, ուսուցման բովանդակության մշտական արդիականացումը, թեստային աշխատանքների կատարելագործումը, գնահատման չափանիշների վերանայումը ըստ գնահատման նոր կարգի և այլն:

2023-2024 ուստարում ամբիոնի գործունեության ամենակարևոր խնդիրներից էր միջազգային համագործակցության ընդլայնումը, որն իրագործվել է մի շարք ուղղություններով:

1. Բարձրագույն կրթության աճող մրցունակության համատեքստում օտար լեզուների դասավանդման մեթոդների նորացման և արդիականացման խնդիրներ են առաջանում, և այս կրթական նոր մարտահրավերներին դիմակայելու համար իսպանական առաջատար բուհերի հետ համագործակցությունը դարձել է ժամանակի հրամայականը: Այս առումով հարկ է կարևորել Կադիսի համալսարանի հետ համագործակցությամբ հայ-իսպանական լսարանի ստեղծումը ԵՊՀ-ում: Այս լսարանի ստեղծման նպատակը երկու համալսարանների միջև ակադեմիական, գիտական և մշակութային կապերի խորացումն ու զարգացումն է, ինչպես նաև համագործակցության նոր հեռանկարների խթանումը: Սա մի յուրահատուկ նորարարական նախագիծ է, որի նպատակը երկկողմ հայեցակարգով համալսարանական ցանցի ստեղծումն է, որը ենթադրում է լսարանների բացում 2 համալսարաններում, այն է՝ հայ-իսպանական լսարան ԵՊՀ-ում և հայ-իսպանական կենտրոն Կադիսի համալսարանում: Այս կապակցությամբ 2023 թ. սեպտեմբերի 18-19-ին ԵՊՀ այցելեց Իսպանիայի Կադիսի համալսարանի պաշտոնական պատվիրակությունը, որի կազմում էին Կադիսի համալսարանի Միջազգայնացման գծով պրոռեկտոր Ռաֆայել Կաստանյեդան, Լեզվական քաղաքականության վարչության տնօրեն Ֆրանսիսկո

Խավիեր դե Կոսը, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետ համագործակցության համալսարանական կենտրոնի տնօրեն Անդրես Սանտանան: Հաշվետու ուստարում ամբիոնը կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ.

- ա) դասախոսություններ Կադիսի համալսարանի հետ համագործակցության շրջանակում՝ ԵՊՀ-ում
- բ) դասախոսություններ Կադիսի համալսարանի հետ համագործակցության շրջանակում՝ առցանց
- գ) դասախոսություններ Գրանադայի համալսարանի հետ համագործակցության շրջանակում՝ առցանց
- դ) դասախոսություններ Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի հետ համագործակցության շրջանակում՝ առցանց

2. Մայիսի 16-ին և 17-ին Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի հետ համագործակցությամբ կազմակերպվել է առցանց դասախոսությունների շարք ամբիոնի իսպանական բաժնի ուսանողների և դասախոսների համար: Դասախոսությունները կարդացել են Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի Ռոմանական, ֆրանսիական, իտալական ուսումնասիրությունների և թարգմանության դեպարտամենտի պրոֆեսոր Խուլիա Սևիլյա Մունյոսը և Մարիա Թերեսա Բարբադիլյոն: Դասախոսությունները կազմակերպվել են Հայաստանում Իսպանիայի դեսպանատան աջակցությամբ: Դասախոսություններին ներկա է գտնվել ՀՀ-ում Իսպանիայի դեսպանատան Գործերի ժամանակավոր հավատարմատար Քրիստինա Կոնեսան:

3. Երկար տարիներ ռոմանական բանասիրության ամբիոնն ակտիվորեն համագործակցում է Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի բանասիրության ֆակուլտետի տարբեր դեպարտամենտների հետ, որոնց հետ համագործակցության շրջանակում կազմակերպվում են գիտական սեմինարներ, դասախոսություններ, ինչպես նաև իրագործվում համատեղ գիտական ծրագրեր: Այս համալսարանում Հայագիտության ամբիոնի ստեղծումը նոր խթան եղավ 2 համալսարանների միջև համագործակցության խորացման, մասնավորապես՝ ԵՊՀ-ում Իսպանական մշակույթի հատուկ դասընթացի կազմակերպման համար:

4. Սույն թվականի հունիսի 24-ից 26-ը Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի Հայագիտության ամբիոնը ռոմանական բանասիրության ամբիոնի հետ համագործակցությամբ կազմակերպել է իսպանական մշակույթի եռօրյա դասընթաց՝ «Իսպանական մշակույթը և Իսպանիայի դեմոկրատական ու եվրոպական կառուցումը» (հաղորդակցություն, գրականություն, թատրոն, կինո, երաժշտություն) խորագրով: Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվել են մասնակցության վկայականներ: Իսպանական մշակույթի դասընթացը վարել են Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի տարբեր ֆակուլտետների անվանի 5 դասախոսներ:

5. Սույն թվականի մարտի 12-ին Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի Ռոմանական, ֆրանսիական, իտալական ուսումնասիրությունների և թարգմանության դեպարտամենտի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջազգային առցանց սեմինար՝ նվիրված Ա. դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» ստեղծագործության թարգմանություններին: Այս միջազգային սեմինարին, պրոֆեսոր Խ. Սևիլյա Մունյոսի հրավերով, մասնակցել է նաև ռոմանական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր Հասմիկ Բաղդասարյանը՝ ներկայացնելով դասախոսություն «Ա. դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանի» ոճական հնարների ֆրանսերենից հայերեն թարգմանության որոշ խնդիրներ» թեմայով:

6. Իտալիայի դեսպանատան հետ ակտիվ համագործակցության շնորհիվ 2023 թ. սեպտեմբերից ուսումնական գործընթացում ներգրավվել է լեզվակիր դասախոս Օռնելա Չիրիլոն, որի դերը կարևոր է ոչ միայն ուսանողների բանավոր խոսքի, հաղորդակցական հմտությունների զարգացման գործում, այլ նաև տարբեր արտալսարանային աշխատանքներում: Նրա կողմից կազմակերպվել են տարբեր քննարկումներ, ֆիլմերի դիտումներ, ինչպես նաև իտալերենի միջազգային CILS քննության նախապատրաստական դասընթացներ:

7. Բտալիայի դեսպանատան հետ համագործակցության շնորհիվ 2024 թ. փետրվարի 7-ին Բտալիայի ԱԳՆ-ն ամբիոնի իտալական բաժնին է տրամադրել արժեքավոր մասնագիտական գրականություն, որը էապես կօգնի կատարելագործել իտալերեն լեզվի տեսական և գործնական դասընթացները: Նմանապես Գրանադայի Իսպաներեն լեզվի և մշակույթի կենտրոնը Գրանադայի համալսարանից ձեռք է բերել արժեքավոր 13 գիրք՝ նվիրված թարգմանաբանության արդի հիմնահարցերին:

8. Ամբիոնում արդեն ավանդույթ է դարձել Սերվանտեսի ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպել «Իսպաներենը որպես օտար լեզու» որակավորման միջազգային քննությունը՝ համապատասխան օտար լեզուներին ներկայացվող եվրոպական արդի չափանիշների: Նմանապես, Սիենայի համալսարանի և Հայաստանում Բտալիայի դեսպանատան հետ համագործակցությամբ 2024 թ. դեկտեմբերի 5-ին, ապրիլի 11-ին և հունիսի 4-ին կազմակերպվել է CILS իտալերեն լեզվի որակավորման միջազգային քննությունը:

9. **Գիտական հրատարակումներ:** Ամբիոնի դասախոսները 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում հրատարակության են պատրաստել 5 հոդված, 2 մենագրություն: Հրատարակվել է նաև մեկ կոլեկտիվ մենագրություն, որտեղ ամբիոնի պրոֆեսոր Հ. Բադդասարյանը ներկայացրել է սույն մենագրության առաջին գլուխը հետևյալ վերտառությամբ. *La enseñanza del español en Armenia. Orígenes, actualidad y perspectivas, en Armenia en el mundo hispano* (ed. Miguel Ángel Sorroche). Obra colectiva. Granada: Alhulia, 2024, pp. 23-44. Այս կոլեկտիվ մենագրությունը՝ *Armenia en el mundo hispano* (ed. Miguel Ángel Sorroche) (Հայաստանը իսպանախոս աշխարհում). Obra colectiva. Granada: Alhulia, 2024, 385 p., որը հրատարակվել է Իսպաներեն լեզվի և մշակույթի կենտրոնի հետ համագործակցությամբ, ինչպես նաև Իսպանիայի կրթության և սպորտի նախարարության հովանավորությամբ, կարևոր ներդրում է հայ-իսպանական պատմամշակութային հարաբերությունների զարգացման գործում: Այն ներկայացնում է իսպանախոս աշխարհում հայկական ներկայությանը նվիրված նոր ուսումնասիրություններ ու արխիվային նյութեր, որոնցից շատերը առաջին անգամ են ներկայացվում ընթերցողին: Իսկ ահա այս տարվա մայիսին Peter Lang հրատարակչության հրատարակած հեղինակավոր կոլեկտիվ մենագրության նախաբանը (էջ 9-11) գրել է ամբիոնի պրոֆեսոր Հ. Բադդասարյանը՝ *Las unidades fraseológicas y las paremias en la literatura* (eds.: M. T. Barbadillo de la Fuente y M. Martí Sánchez). Berlín: Peter Lang, 2024:

10. **Մշակութային միջոցառումների մասին:** Մ/թ հոկտեմբերի 16-ին ԵԼՀ ֆակուլտետի Ե. Չարենցի անվան դահլիճում կազմակերպվել է իտալերեն լեզվին նվիրված շաբաթը, որին մասնակցել են իտալական բաժնի ուսանողները: Իտալական շաբաթը նվիրված էր «Իտալերենը և շրջակա միջավայրի կայուն զարգացումը» թեմային: Թեմայի ընտրության նպատակն էր իտալերեն լեզվի միջոցով խթանելու շրջակա միջավայրի բնապահպանական կայունության զարգացման մշակույթը: Միջոցառմանը ներկա է եղել Հայաստանում Բտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալֆոնսո դի Ռիզոն:

11. **Դպրոցների հետ համագործակցություն:** Մարտի 20-ին Ռոմանական բանասիրության ամբիոնը հյուրընկալել է Ադամյան դպրոցի սաներին, որոնց հետ կազմակերպվել է զրույց ապագա մասնագիտության ընտրության շուրջ և ներկայացվել են ամբիոնի ծրագրերը: Ամբիոնի դասախոսներ Հ. Բադդասարյանը և Հ. Օհանյանը մշակել և կազմել են իսպաներենի 5-8 դասարանների նոր առարկայական ծրագրերը՝ ըստ հանրակրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի մշակման նոր հայեցակարգային դրույթների:

12. **Պրակտիկայի կազմակերպում և համագործակցություն դեսպանատների հետ:** Ամբիոնը ակտիվորեն համագործակցում է ՀՀ-ում Ուրուգվայի Արնելյան Հանրապետության դեսպանատան հետ, ինչի շրջանակում իսպանական բաժնի ուսանողները հնարավորություն են ունեցել իրենց մասնագիտական պրակտիկան սույն թվականի փետրվարի 5-ից մինչև մարտի 15-ը անցկացնել *Ուրուգվայի դեսպանատանը*: Սույն թվականի մարտի 21-ին ՀՀ-ում Ուրուգվայի Արնելյան Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էդուարդո Աուզուսոտ Ռոզենբրոկը այցելել է ԵԼՀ ֆակուլտետ, որտեղ հանդիպում է կազմակերպվել ամբիոնի իսպանական բաժնի ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում ուսանողները ներկայացրել են պրակտիկայի ընթացքում դեսպանատանը կատարված

ուսումնասիրությունները և արժանացել դեսպանի բարձր գնահատանքին: Մույն թվականի մայիսի 7-ին Սանդրա Սանտանա Էրնանդեսը՝ Հայաստանի Հանրապետությունում Դոմինիկյան Հանրապետության դեսպանության ներկայացուցչության երկրորդ քարտուղարը և գրասենյակի ղեկավարը, ամբիոնի իսպանական բաժնի ուսանողների համար դասախոսություն է կարդացել «Դոմինիկյան բառերն ու արտահայտությունները արդի իսպաներենում» թեմայով:

13. Մասնակցություն օլիմպիադաներին

Պյատիգորսկի պետական համալսարանի կողմից կազմակերպված օտար լեզուների առաջին միջազգային օլիմպիադայում ամբիոնի իսպաներենի բաժնի ուսանողներն արժանացել են առաջին մրցանակների (Diplomas of the winner of the I International Olympiad in Foreign Languages «Languages of Friendship» held in Pyatigorsk, Russia). Այս մրցույթում Ք. Ս. Հովհաննիսյանը և Մ.-Ք. Մուշեղյանը գրավել են առաջին տեղը, Ժ. Սավոյանը զբաղեցրել է երկրորդ տեղը, Վ. Դավթյանը և Է. Շահբազյանը՝ երրորդ տեղը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ԵԼՀ ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանի՝ 2023-2024 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ գնահատել այն դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Ընթացիկ հարցեր

- ❖ **ԼՍԵՑԻՆ՝** Ֆրանսիական բանասիրության ամբիոնի **դասախոսի** թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի հարցը:
- ❖ Ռոմանական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Հ. Օհանյանի՝ «Կենդանիների անուններով դարձվածքների լեզվաճանաչողական հայեցակերպը իսպաներենում և հայերենում» մենագրության հրատարակման երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Գայանե Սարգսյանը ներկայացրեց Թ.Մ. Բլբուլյանի վերջին 5 տարիների գիտամանկավարժական գործունեությունը: Թ. Բլբուլյանն ունի տպագրված 3 հոդված, 2 դասագիրք, 6 թարգմանություն և տպագրության է հանձնել 3 գիրք: Նշվեց նաև, որ նա վայելում է իր գործընկերների և ուսանողների հարգանքը, ունի գիտամանկավարժական գործունեության երկար տարիների փորձ, օժտված է մարդկային բարձր արժանիքներով և արժանի է ամբիոնում դասախոսի պաշտոն զբաղեցնելուն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով Ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս Թ. Մ. Բլբուլյանի գիտամանկավարժական փորձն ու հմտությունները՝ երաշխավորել նրա թեկնածությունը դասախոսի պաշտոնում ընտրվելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվի առնելով ռոմանական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Հ. Օհանյանի կատարած աշխատանքը՝ երաշխավորել նրա «Կենդանիների անուններով դարձվածքների լեզվաճանաչողական հայեցակերպը իսպաներենում և հայերենում» մենագրությունը հրատարակման: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝

Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Գ. Դավալյան

28.06.2024թ.